«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ **Ուսուցման գործընթացում համագործակցության անհրաժեշտությունը:Համագործակցային ուսուցման մեթոդները**

Հետազոտող ուսուցիչ՝ Սուսաննա Գևորգյան
անուն, ազգանուն

.....

Արմավիրի << Տիգրան Մեծ>> -ի անվան ՌՄՀ վարժարան

Մենթոր ուսուցիչ ՝ Լյուբա Հայրապետյան
անուն, ազգանուն

ԱՐՄԱՎԻՐ- 2022

Բովանդակություն

1Ներածություն_էջ 3 -4

2 Ուսուցման գործընթացում համագործակցության անհրաժեշտությունը էջ 5-10

3 Համագործակցային ուսուցման մեթոդները էջ 10-13

4 Եզրակացություն_էջ 14-15

5 Առաջարկություն--------էջ 16

6 Օգտագործված գրականության ցանկ __էջ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս արագ աճող մրցունակ աշխարհում անգլերենով խոսում է աշխարհի բնակչության գրեթե մեկ քառորդը: Անգլերենը դարձել է պարտադիր կապի լեզու՝ «the lingua franca» (լեզու, որն ընդունված է որպես ընդհանուր լեզու խոսողների միջև, որոնց մայրենի լեզուները տարբեր են) ամբողջ աշխարհում ՝լեզվի յուրացման և դպրոցական կրթության մեջ:

Նորարարական տեխնոլոգիաներով համալրված այս դարում օտար լեզվի դասավանդման խնդիրները նոր մարտահրավերներ են առաջադրում արդի տեսաբաններին: Լեզվուսուցման ընթացքում կիրառվում են տեղեկատվական նոր տեխնոլոգիաներ, փորձ է արվում մշակելու դասավանդման նոր ձևեր, մեթոդներ, մոտեցումներ և այլն:

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Չնայած իր տարածմանը ուսուցիչների շրջանում և երկարատև պատմությունը, այն չի գտել լայն կիրառում: Դրա պատճառն ամենևին սովորողների առաջընթացի և ընդհանուր զարգացման վրա համագործակցային ուսուցման դրական ազդեցության վկայությունների բացակայությունը չէ:
Իրականում, համագործակցային ուսուցումը ժամանակակիրց կրթության, դասավանդման և ուսուցման ամենաշատ ուսումնասիրված ոլորտներից մեկն է: Կարճ ասած՝ գիտելիքների հասարակությունում անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ուսուցման վերաբերող հետազոտությունների արձագանքները բավական խոստումնալից են:
Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում: Դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքները ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում:
Համագործակցային ուսուցման կիրառումը սովորելը ժամանակատար գործընթաց է Հայաստանի դպրոցներն ի տաբերություն այլ երկրների դպրոցների

ավելի շատ հիշեցնում են ուսուցիչների և սովորողների ավանդական համայնքներ: Ուստի համագործակցային ուսուցումը Հայաստանում ունի ներդրման ու զարգացման համար անհրաժեշտ հիմք և բարենպաստ պայմաններ: Համագործակցային ուսուցումը կարևոր է հատկապես օտար լեզուների դասավանդման ժամանակ, քանի որ հանրակրթական դպրոցներում օտար լեզուների հիմնական նպատակ է սահմանվել՝ ընդլայնել սովորողի հաղորդակցվելու և համագործակցելու կարողությունները: Օտար լեզուների իմացությունը նպաստում է անձի հաղորդակցական կարողությունների զարգացմանը, միջմշակութային փոխըմբռնմանը, այլ մշակույթների ու արժեքների ընկալմանն ու գնահատմանը, բնության ու ժամանակակից աշխարհի մասին առավել ամբողջական գիտելիքների ստանալուն, գեղագիտական, բարոյական, սոցիալական, համամարդկային և ազգային արժեքների գիտակցմանը, պահպանմանը և փոխանցմանը :
Տվյալ դեպքում մոտեցումը ավանդականից տարբերվում է նրանով, որ կարևորվում է ոչ միայն այն, թե ինչ պետք է սովորեցնել, այլ նաև այն, թե որը պիտի լինի ուսուցման արդյունքը, այսինքն՝ ի՞նչ վերջնարդյունք ենք ակնկալում: Այստեղ վճռորոշ գործոնն այն է, թե որքանով են սովորողի ձեռքբերումները մոտենում չափորոշիչում նշված նպատակներին (օտար լեզվակիրների հետ շփում, հաղորդակցում, աշխատաշուկայում մրցու նակության մեծացում և այլն):

Օտար լեզվի ուսուցման գերակա նպատակը հաղորդակցության կարողությունների և դրանց միջոցով սովորողի անձի՝ որպես միջմշակութային հաղորդակցության սուբյեկտի ձևավորումն է: Մեր երկրի կարևոր հարստություններից մեկը գիտական ներուժն է, որի ձևավորման պատասխանատվությունը կրում է նաև հանրակրթությունը: Հասարակական բոլոր փոփոխությունները ազդում են նաև կրթական համակարգի վրա:

Ուսուցման գործընթացում համագործակցության անհրաժեշտությունը

Համագործակցային ուսուցումը լայն տարածում է գտել աշխարհում: Այն ավելի ու ավելի է կիրառվում՝ որպես աշխատանքային, դասավանդման և ուսուցման նոր մոտեցում և ռազմավարություն:

Համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի առավել բարձր աստիճանն է, որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում: Այն ընձեռում է հնարավորություններ բազմաբնույթ կրթական նպատակներին հասնելու համար, ինչպիսիք են ակադեմիական հասկացությունների, սկզբունքների և իրադարձությունների ընկալումը, միջանձնային հմտությունների զարգացումը և այլն: Ժամանակակից ուսուցման պրակտիկայի լավագույն օրինակը փոքր խմբային աշխատանքն է, որի արմատները կարելի է գտնել սոցիոլոգների և ժամանակակից մանկավարժների աշխատանքներում :

Փոքր խմբային աշխատանքը երբեմն պայմանականորեն անվանում են համագործակցային ուսուցում, համատեղ գործունեության վրա հիմնված ուսուցում կամ սոցիալական ուսուցում: Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք կիրառվում են դասի տարբեր փուլերում: Այդ ընթացքում աշակերտները ներքաշվում են մի գործընթացի մեջ, որտեղ նրանք կիսվում են գաղափարներով, փոխանակում են տեղեկատվություն, կատարում են ընտրություն և կայացնում են որոշումներ: Դրանք են "Աշակերտների թիմային առաջադիմություն", "Խճանկար", "Շրջվիր դեպի զույգդ", "Պրիզմա", "Խմբային հետազոտություն", "Շրջագայություն պատկերասրահում" և այլն :

Համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար, ինչը ևս կրթական բարեփոխումների կարևոր պահանջներից է : Նշենք նաև, որ ժամանակակից կրթական գործընթացում կարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումն ուսուցչի կողմից, այլ աշակերտին մասնակից դարձնելը այդ գիտելիքի ձեռքբերմանը:

Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրույնության, համագործակցային, հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ, օրինակ՝ տեղեկույթի որոնման, հավաքման, մշակման և այլն: Սակայն այդ հմտությունների ձեռքբերումը սովորողների կողմից երկարատև աշխատանքի արդյունք է, իսկ ուսուցչին հնարավորություն է տալիս կատարելագործել, հարստացնել իր մեթոդական մոտեցումները տարբեր խնդիրների լուծման ժամանակ: Այսօր մանկավարժների մեթոդական զինանոցը բավականին հարուստ է, սակայն բոլորովին այլ է դրանց կիրառությունը: Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում

է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին՝ հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման, արժևորման համար, ինչպես նաև բարելավում է խմբային աշխատանքը:

Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են՝

1. Դրական փոխկախվածություն - Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջացելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:

2. Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն - Խմբի անդամները համգործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:

3. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն - Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:

4. Սոցիալական հմտություններ- Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդրում ունենալը:

5. Խմբային գործընթաց- Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը: Հետագայում այդ տարրերին Պասի Սալբերգի կողմից ավելացվեց փոխներգործուն/ինտերակտիվ առաջադրանքը որպես

համագործակցային ուսուցման 6-րդ տարր: Նրա կարևոր չափանիշը այն է, որ խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը:



Գծապատկեր 1. Համագործակցային ուսուցման տարրերը

Դասի կազմակերպման ժամանակ ուսուցչի հիմանական աշխատանքը կլինի բոլոր խմբերի աշխատանքների վերահսկումն ու ուղղորդումը: Ցանկացած դաս եզակի է, ուստի ուսուցչի վարպետության ցուցանիշներից մեկը նպատակին համապատասխան մեթոդի ընտրությունն է:

Համագործակցային աշխատանքի առավելությունները:

Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել: Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ սովորելը, այլև կարևոր է խմբային զարգացման մշակման միջոցով դառնալ հմուտ համագործակցողներ (համագործակցային հմտություններ) և գիտելիքների ակտիվ կիրառողներ (մտածողության հմտություններ):

Համագործակցային ուսուցման իմաստն է՝

·Յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ: Անհատին դարձնել ակտիվ և կարող լինելու խմբի անդամ և համագործակցելու: Եթե աշակերտներին պարզապես բաժանենք խմբերի և առաջարկենք միասին աշխատել, ապա դա չի նշանակում, որ նրանց մղել ենք արդյունավետ համագործակցության: Ոչ բոլոր խմբային աշխատանքներն են, որ կարող են ապահովել համագործակցային ուսուցում: Շատ են պատահում

դեպքեր, երբ ընդհանուր առաջադրանքը իրականացնելու ուղղությամբ խմբի ջանքերը արդյունք չեն ունենում:

Առաջադրանքը, մեթոդը պլանավորվում և իրականացվում է այնպես, որ սովորողին մղի համագործակցության և նպաստի նրա ակտիվ մասնակցությանը ուսուցման պրոցեսին:

Փոքր խմբերով աշխատելու առավելությունները:

Համագործակցային ուսուցման ընթացքում շատ կարևոր է խմբերի մեծությունը: Առավել արդյունավետ են համարվում 4-5 հոգուց բաղկացած խմբերը: Այդպիսի խմբերում աշակերտները առավել մեծ ակտիվություն դրսևորելու հնարավորություն ունեն: Չորս հոգանոց խմբերում կարևորվում է յուրաքանչյուր աշակերտի անհատական պատասխանատվությունը և միաժամանակ ձևավորվում է կոլեկտիվ աշխատանքի մթնոլորտ: Խմբի մեծությունը կախված է դասի նպատակից և ընտրված մեթոդից: Փոքր խմբերով աշխատանքը էապես մեծացնում է աշակերտի ակտիվությունը դասապրոցեսում:

Ակնհայտ է, որ հնարավոր չէ արդյունավետ սովորել միայն դիտողի, լսողի, պասիվ վիճակում գտնվելով: Աշակերտն ավելի լավ է սովորում, երբ ակտիվ մասնակցում է գործընթացին:

Փոքր խմբերով ուսուցումը կարևորվում է նաև այն առումով, որ դասարաններում աշակերտների խտության մեծացման արդյունքում զգալիորեն դժվարանում է ուսուցման ֆրոնտալ անհատական հարցման ձևերի կիրառումը: Երբ ուսուցիչն աշխատում է դասարան (մեծ) խմբի հետ, ապա աշակերտները արտահայտվելու, քննարկելու ավելի քիչ հնարավորություններ են ունենում: Փոքր խմբի պարագայում այդ հնարավորությունները շատ ավելի մեծ են: Փոքր խմբերով ուսուցումը ունի հետևյալ նպատակները՝

զարգացնում է խնդիրներ լուծելու կարողություն, ձևավորում է հաղորդակցման հմտություն, ·աշակերտները սովորում են միմյանցից, զարգանում է աշակերտների պատասխանատվության զգացումը, միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու հարցում, խթանում է թիմային աշխատանքը, ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար, քննարկումների միջոցով

ամրապնդվում է աշակերտների համոզմունքները, ընձեռում է ակտիվ մասնակցություն և ինքնադրսևորման հնարավորություն:

Այսօր հանրակրթական դպրոցների մեծ մասում դասարանների խտությունը անցնում է 20-25 (որոշ տեղերում՝ 30-34): Ոչ բոլոր դպրոցներն ունեն համապատասխան կահավորում և պայմաններ: Դասարաններում չկան շարժական սեղաններ, խմբային աշխատանքի համար նախատեսված պարագաներ, կապի առկայություն, տեսացրիչ, էլեկտրոնային գրատախտակ և այլն: Ուստի առաջարկում ենք դասերին 20 և ավելի աշակերտ ունեցող դասարաններում կիրառել «Շրջվիր դեպի զույգդ» մեթոդը:

Այս մեթոդը հնարավորություն է տալիս խուսափել դասաժամին ավելորդ աղմուկից, տեղաշարժից և խառնաշփոթից: Աշխատանքային դիրքը լինում է՝ «աչք աչքի», «երես երեսի»: Դեմ առ դեմ գտնվողները կարողանում են հեշտությամբ տեսնել և լսել մեկը մյուսին: Հաղորդակցումը կատարվում է խոսքով, աչքերով:

Այստեղ կարևոր է աշակերտներին դիմել պատահական ընտրությամբ՝ հնարավորություն տալով նրանց ներկայացնելու իրենց պատասխանները ամեն քննարկումից հետո: Նման անհատական պատասխանատվությունը ավելի զգոն է դարձնում զույգին, և աշակերտներն ավելի լրջությամբ են մոտենում առաջադրանքին և ստուգում միմյանց՝ համոզվելու համար, թե արդյո՞ք երկուսն էլ պատրաստ են պատասխանելու, թե ոչ:

Այս մեթոդը ուսուցչին հնարավորություն է տալիս անարգել շրջել դասարանում, տալ անհատական հրահանգներ և առանձին մոտեցում ցուցաբերել խմբերին: Այս ժամանակ աշխատանքային աղմուկը կառավարելի է, իսկ աշխատանքային խմբերը չեն խանգարում իրար: Համագործակցային ուսուցման արդյունավետության համար շատ կարևոր է ուսուցչի դասի պլանավորման նախապատրաստական աշխատանքների գրագետ կազմակերպումը: Այն ուսուցչից պահանջում է՝

* հիմնավորել տվյալ դասը համագործակցային խմբերով կազմակերպելու անհրաժեշտությունը,

* որոշել համապատասխան խմբեր կազմելու սկզբունքները, ձևերը,

* նախապատրաստել անհրաժեշտ բաշխիչ նյութեր,

* ձևակերպել նպատակներին համապատասխան առաջադրանքներ,

* ձևակերպել առաջադրանքների կատարման հստակ հրահանգներ,

* որոշել հանձնարարությունների համապատասխան ծավալ:

Դասի կազմակերպման ժամանակ ուսուցչի հիմնական աշխատանքը կլինի բոլոր խմբերի աշխատանքների վերահսկումն ու ուղղորդումը: Յուրաքանչյուր մեթոդի կիրառման նպատակները խիստ բազմազան են, ինչը ենթադրում է նաև, նպատակից կախված, մեթոդի ձևափոխման հնարավորություն: Ցանկացած դաս և դասարան եզակի է, ուստի ուսուցչի վարպետության ցուցանիշներից մեկը նպատակին համապատասխան մեթոդի ընտրությունն է :

Համագործակցային ուսուցման մեթոդներ

Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ. դրանք պետք է ուղղված լինեն սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը: Ուսուցիչը միանգամից, մի դասի ժամանակ չի կարող օգտագործել մեթոդների հարուստ զինանոցը: Նա պետք է որոշակի դասի համար կատարի ուսուցման մեթոդի, հնարի ընտրություն:

Ուսուցման մեթոդի հիմքում ընկած են այն խնդիրները, որոնք լուծվում են դասի ժամանակ կամ դասի որոշակի փուլում. բացի դասի նպատակից ու խնդիրներից, մեթոդների ընտրությունը կախված է նաև՝

* նյութի բովանդակությունից

* ուսումնական նյութի ծավալից և բարդությունից

* նոր գիտելիք ձեռք բերելու նկատմամբ աշակերտների շահագրգռվածությունից և համագործակցային հմտությունների մակարդակից,

* աշակերտների տարիքային առանձնահատկություններից,

* ուսումնական ժամաքանակից,

* ուսուցման նյութատեխնիկական պայմաններից,

* ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններից,

* դասարանում աշակերտների թվաքանակից,

* ուսուցչի պատրաստվածության մակարդակից և այլն:

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Ստորև ներկայացնում ենք համագործակցային ուսուցման մի շարք մեթոդներ: Դրանք են՝

1 աշակերտների թիմային առաջադիմություն,

2 խճանկար,

3 շրջագայություն պատկերասրահում,

4 երեք բանալի և մեկ կողպեք,

5 հինգրոպեանոց ազատ շարադրանք:

1. Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ

Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:

2. Խճանկար

(Ջիգսո, Jigsaw): Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև վերամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարը դասարանում կարող է կիրառվել տարբեր ձևերով: Ներկայացնենք դրանցից մեկը: Աշակերտներին կարելի է բաժանել չորս կամ հինգ անդամ ունեցող տարասեռ խմբերի: Յուրաքանչյուր խմբին տալ դասի

մեկ հատված և աշխատելու համար որոշակի ժամանակ: Այն լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց հատվածը՝ կարդում են, բառերը բացատրում, դուրս գրում ուղղագրական արժեք ներկայացնող բառեր, դրանցով կազմում նախադասություններ, կատարում լեզվական աշխատանքներ և այլն: Յուրաքանչյուր խումբ սովորում է դասի մեկ հատվածը, բայց արդյունքում սովորում են ամբողջ դասը՝ դադարեցնելով աշխատանքը և ուշադիր լսելով բոլոր խմբերի պատասխանները: Կարող է ունենալ նաև փորձագետների խումբ՝ «Ջիգսո 2», որի փուլերն են

. նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում

·աշխատանք փորձագիտական խմբում

·աշխատանք ուսումնական խմբում

·ավարտական աշխատանք

·ամփոփում

3. Շրջագայություն պատկերասրահում:

Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Կրտսեր տարիքի աշակերտների հետ աշխատելիս խմբերին կարելի է տալ նույն առաջադրանքը կամ խնդիրը: Աշխատանքը վերջացնելուց հետո, համեմատելով մյուս խմբերի աշխատանքների հետ, աշակերտները հետադարձ կապ են ապահովում:

4. Երեք բանալի և մեկ կողպեք:

Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Աշակերտներին առաջարկում ենք դասից դուրս գրել երեք նախադասություն (երեք բանալի), որը կարևոր է այդ նյութը յուրացնելու համար, բնագրից ընտրել մեկ նախադասություն (կողպեք որը կամփոփի, կընդհանրացնի դասը:

Առարկա ՝ Անգլերեն

Դասարանը՝ 9-րդ

Դասի թեման՝ Discovering Australia

Դասի ընթացքը՝

Նախ ուսուցիչը կարդում և թարգմանում է նոր դասը: Այնուհետև աշակերտներին առաջարկում է դասից դուրս գրել երեք նախադասություն (երեք բանալի, որը կարևոր է այդ նյութը յուրացնելու համար): Օրինակ՝

1. Captain James Cook discovered the huge land.

2. It is the world ‘s largest island

3 It is the only country that is also a continent.

Հետո բնագրից ընտրում են մեկ ընդհանրական նախադասություն (կողպեք), որը կամփոփի, կընդհանրացնի ասելիքը, միտքը, գաղափարը:

This is Australia. (կողպեք)

Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում են ընտրություն կատարլու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նա համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողությունսելիքը, միտքը, գաղափարը:

5. Հինգրոպեանոց ազատ շարադրանք:

Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը:

Եզրակացություն

«Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության»:

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է:

Համագործակցային ուսուցման ներդրումը Հայաստանում իր հետ բերեց մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում: Մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաև հասարակական գործառույթ: Հայաստանում, ինչպես ամբողջ աշխարհում, ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով, ուստի համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար:

Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման:

Դասալսումների ժամանակ ուսուցիչների կողմից կիրառվում են բազում մեթոդներ, սակայն դրանք գրեթե միշտ կա՛մ չեն հասնում տրամաբանական ավարտին՝ դասի նպատակին, կա՛մ էլ ժամանակի մեջ չեն տեղավորվում, խմբերը համասեռ չեն կազմվում, խմբերում թիմային աշխատանքը չի ստացվում, ոչ բոլորն են ակտիվություն ցուցաբերում, անհրաժեշտ պահանջները կա՛մ չեն հասկանում, կա՛մ էլ թերի են կատարում:

Ցանկացած նոր աշխատանք կատարելիս կարող են բացահայտվել բազում թերություններ, որոնք շտկվում, ճշգրտվում են աշխատանքի բազմակի կրկնության արդյունքում: Համագործակցային ուսուցումը նպաստում է.

· անձի զարգացմանը և անհատականության ձևավորմանը,

· հոգեբանական և ֆիզիկական առողջության ապահովմանը,

· սթրեսի հաղթահարմանը,

· առողջ փոխհարաբերությունների դրսևորմանը:

Համագործակցային ուսուցման տարբերն են

· դրական փոխկախվածության ապահովում

· դեմ առ դեմ փոխազդեցություն,

· անհատական հաշվետվություն և պատասխանատվություն,

· միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ,

· խմբային գործընթացի մշակում,

· փոխներգործուն կամ ինտերակտիվ առաջադրանքի կատարում:

Մանկավարժական տեխնոլոգիաների, համագործակցային մեթոդների նկարագրությունները նպատակ չունեն առաջարկելու ուսուցման կազմակերպման հստակ դեղատոմսեր, բայց կարող են նախանշել դասավանդման արդյունավետության ապահովման բնութագրիչները:

Կրթական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե ուսուցումը որքանով է ուղղորդված դեպի սովորողները և հասարակությունը, ինչպես են մատուցվում, գնահատվում սովորողների գիտելիքները, նրանց կարողությունները և հմտությունները: Համագածակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում են հենց աշակերտների միջոցով:

Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեքբերումը, այլև խմբային գործընթացի մշակման միջոցով հմուտ համագործակցողների (համագործակցային հմտություններ կիրառողներ) և գիտելիքների ակտիվ կիրառողներ (մտածողության հմտություններ կիրառողներ) ձևավորելը: Համագործակցային ուսուցումը մեծացնում է նաև սովորողների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը (ինքնաճանաչման և ինքնուղղորդման հմտությունների կիրառումը)

Առաջարկություններ

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է:

Հայաստանում, ինչպես ամբողջ աշխարհում, ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով, ուստի համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար:

Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման: Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է:

Ուստի առաջարկում եմ

- ապահովել օտար լեզվի ուսումնասիրման անհրաժեշտ պայմաններ, ժամաքանակ, խմբերում աշակերտների փոքր թվաքանակ, այլընտրանքային դասագրքեր, մեթոդական ուղեցույցներ, ձեռնարկներ և այլն

- նախադրյալներ ստեղծել օտար լեզվի հենքային ուսուցման համար, ապահովել սովորողների կրթական պահանջմունքները, հաշվի առնել նրանց նախասիրությունները, հետաքրքրությունները և ապագա մասնագիտացումը,
- շեշտը դնել կրթության վերջնարդյունքի վրա,
- բոլոր օտար լեզուների նկատմամբ իրականացնել համագործակցային մոտեցում:
- Դպրոցում ուսուցիչների նախաձեռնությամբ հաճախակի կազմակերպել բաց քննարկումներ, որտեղ վերջիններս հնարավորություն կունենան արտահայտվել, բարձրաձայնել առկա հիմնախնդիրները, բանակցել:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայեցակարգ Հայաստանի Հանրապետության հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում օտար լեզուների դասավանդման, 2017

2. Դավթյան Մ., Գրիգորյան Ք., Արնաուդյան Ա., Զոհրաբյան Ա., Հովհաննիսյան Գ., Օհանովա Ի., «Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ», Ձեռնարկ ուսուցիչների համար, ԱՅՈԵՔՍ, Երևան, Տիգրան Մեծ, 2004, 319 էջ

3. Հովհանիսյան Ա. , Հարությունյան Կ. , Խրիմյան Ս. , Խաչատրյան Ս. , Բայաթյան Ն. , Ալեքսանյան Լ. , Պուրուկուրու Վ. Համագործակցային ուսուցում. Ձեռնարկ, Երևան: «Անտարես»: 2006. 122 էջ:

4. Վեսա Պուրուկուրու Համագործակցային ուսուցում, վերապատրաստողի ուղեցույց, Երևան: «Անտարես»: 2006, 95 էջ:

5. Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006, 96 էջ:

6. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանա կակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005, 402 էջ:

7. Ա. Է. Ափոյան , Համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում, Գիտական տեղեկագիր, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, 2014, էջ 336

Դասապլան

Ուսուցիչ՝ Սուսաննա Գևորգյան Առարկա՝ Անգլերեն Դասարան՝ 9-րդ

Թեմա՝	*Discovering Australia*

Օգտագործվող նյութեր՝	*Դասագիրք,տետր,գրիչ,գրատախտակ,պաստառ,նկարներ:*
Հիմնական հասկացություններ	*Աշխարհամաս,պետություն,ճանաճողական հետաքրքրություն,նոր բառապաշար՝island,islander,to be washed by, hemisphere,explore,treasure,a river trip.*
Դասի նպատակը՝	*Ընդլայնել ճանաչողական հետաքրքրություն,ներկայացնել նոր բառեր և բառակապակցություններ և օգտագործել այն բանավոր խոսքի մեջ: Զարգացնել սեփական մտածողություն:*

Գործողություններ (ժամ/ տևողություն)	**Պլանավորած ՈւԳ ռազմավարություններ**	**Առանցքային հարցեր** **Հիմնական ստուգումներ** **(հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)**
Վերջնարդյունքները	*Աշակերտը կկարողանա.* • *Կկարողանա արտահայտիչ ընթերցել և պատմել,հարցերին պատասխանել,* • *Կթվարկի պետությունները և կհամեմատի այլ պետական կարգ ունեցող պետությունների հետ* • *Կվերլուծի նոր բառերն ու բառակապակցությունները ,կսովորի այդ բառերը ,կկարողանա զարգացնել բանավոր խոսք:*	

5 ր 5ր 20ր 15ր	*Նախապատրաստական մաս* *Հարցադրումների միջոցով երեխաներին ներգրավել դասապրոցեսին՝ վերհիշելով դասը,բառերը:* *Աշակերտները ընթերցեն դասը,թարգմանեն,իրար հարցեր տան ու պատասխանեն.Այս դասի ընթացքում կկիրառեմ համագործակցության՝3 բանալի և 1 կողպեք մեթոդը,երեխաներին տալով հնարավորություն 3 բանալի նախադասությունների միջոցով հասնել կողպեքի բացմանը:* *Բանավոր և գրավոր կատարեն տրված վարժությունները:*	- *1would you like to visit Australia?Why yes|why no?* - *2 what would you like to see in Australia?Why?*
Գնահատում	*Միավորային և ձևավորող գնահատում*	
Տնային հանձնարարություն	*Talking it over.Check up.*	